ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ



ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից կամ **օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավորապես գտնվելու նպատակով** ներմուծվող ապրանքներին տրամադրվող արտոնությունների վերաբերյալ

2024

Ուղեցույցի նպատակն է տեղեկացնել Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց և ժամանակավորապես Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրյա ֆիզիկական անձանց տրամադրվող արտոնությունների մասին:

ԻՐԱՁԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող այլ կարգավորումներին կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝ https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



1. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած գործունեության ոլորտներում աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրյա ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետություն ժամանելիս՝ ***մաքսատուրքերի և հարկերի վճարումից ազատման*** ինչպիսի՞ արտոնությունից կարող է օգտվել.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած գործունեության ոլորտներում աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրյա ֆիզիկական անձը կարող է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակահատվածում ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռում, մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել նախկինում օգտագործված անձնական օգտագործման ապրանքներ:

Ուշադրություն

Օտարերկրյա ֆիզիկական անձը՝ դա անդամ պետության անձ չհանդիսացող անձն է (այսինքն՝ անդամ պետության տարածքում մշտական բնակության վայր չունեցող անձն է):

2. Որոնք են այն գործունեության ոլորտները, որոնցում աշխատանքի թույլտվություն ստացած անձը կարող է օգտվել նշված արտոնությունից.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ-ի դեկտեմբերի 26-ի «Այն գործունեության ոլորտները սահմանելու մասին, որոնցում աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրյա ֆիզիկական անձինք կարող են մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել իրենց նախկինում օգտագործված անձնական օգտագործման ապրանքները» թիվ 1955-Ն որոշման՝ *արտոնությունից կարող է օգտվել Հայաստանի Հանրապետությունում գործունեության բոլոր ոլորտներում աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրյա ֆիզիկական անձը:*

3. Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանքի թույլտվություն ստացած անձը ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռում, մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ Հայաստանի Հանրապետության տարածք նախկինում օգտագործված անձնական օգտագործման ապրանքներ ներմուծելիս՝ ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի մաքսային մարմնին:

Ֆիզիկական անձը մաքսային մարմնին պետք է ներկայացնի որևէ գործունեության ոլորտում աշխատանքի թույլտվությունը:





4. Ժամանակավորապես Հայաստանի Հանրապետություն ժամանած օտարերկրյա ֆիզիկական անձը ինչպիսի արտոնությունից կարող է օգտվել.

Ժամանակավորապես Հայաստանի Հանրապետություն ժամանած օտարերկրյա ֆիզիկական անձը կարող է՝ առանց մաքսատուրքերի հարկերի վճարման ներմուծել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանված ցանկում (այսուհետ՝ Ցանկ) նշված՝ օգտագործման մեջ եղած, սահմանված քանակությամբ անձնական օգտագործման ապրանքներ, իր գտնվելու ժամանակահատվածի համար՝ անկախ այդ ապրանքների արժեքից և (կամ) քաշից:





5. Որո՞նք են Ցանկում ներառված՝ **օգտագործված անձնական օգտագործման այն** ապրանքները, որոնք **օտարերկրյա ֆիզիկական անձինք Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածի համար՝ կարող են ներմուծել առանց մաքսատուրքերի հարկերի վճարման** .

Ցանկում ներառված են հետևյալ ապրանքները՝

- Հագուստ, կոշկեղեն, գլխի հարդարանքներ, հովանոցներ, ոսկերչական իրեր, անձնական հիգիենայի պարագաներ, անձնական բնույթի այլ ապրանքներ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ:
- Դյուրակիր ձայնագրող, տեսագրող, վերարտադրող ապարատուրա, ֆոտոապարատուրա՝ յուրաքանչյուր անվանման 1 միավորից ոչ ավելի քանակությամբ, ինչպես նաև այդ ապարատուրայի պարագաներ, տեսագրության կրիչներ, ձայնագրության կրիչներ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ:
- Բջջային հեռախոսներ, սմարթֆոններ և կապի նույնանման սարքվածքներ՝ 2 միավորից ոչ ավելի քանակությամբ:

- Դյուրակիր անձնական համակարգիչներ, պլանշետներ, խաղային կցուրդներ՝ յուրաքանչյուր անվանման 1 միավորից ոչ ավելի քանակությամբ, և դրանց պարագաներ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ:
- Շարժական երաժշտական գործիքներ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ:
- Մշակութային արժեքներ (ՀՀ օրենսդրությանը համապատասխան դրանց շարքին դասելու փաստը հաստատվելու դեպքում)՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ:
- Մանկական սայլակներ, ավտոմեքենաների նստատեղերին ամրացված մանկական նստատեղեր՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ:
- Հաշմանդամների սայլակներ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ:
- Սպորտի, զբոսաշրջության և որսի համար նախատեսված գույք և պարագաներ, օդապարիկներ՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ:
- Ընտանի կենդանիներ, այդ թվում՝ որսի, սպորտի, զբոսաշրջության համար օգտագործվող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ թվով:
- Դյուրակիր դիալիզորդներ, նույնանման այլ բժշկական սարքեր և դրանց վրա ծախսվող նյութեր՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածում օգտագործման համար անհրաժեշտ քանակությամբ





ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ